Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
12.10.2012թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ **7038**
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	928	13.1
դիմում	5675	80.6
բողոք	297	4.2
կրկնակի	93	1.3
կոլեկտիվ	45	0.6

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝**1028**

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	956	93.8
բողոք	72	7.1

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	233	3.3
կոմունալ-կենցաղային	28	0.39
շինարարական	50	0.17
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	8	0.11
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	132	1.8
առողջապահության	78	1.1
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	2484	35.2
օրենսդրական	449	
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	322	6.3
ապարատային		

այլ հարցեր	3240	46.1
սեփականաշնորհում	14	0.1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2012Թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 7038 նամակներից մոտ 13.1%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 7.1%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 80.6%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 35.2%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 6.3%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում, ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 3.3%-ը առնչվում է բնակարանային, 0.39%-ը կոմունալ-կենցաղային, 0.17%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 46.1%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվնում ենք, որ ստացված դիմումներից 6636-ին տրվել է գրավոր, իսկ 325-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 77-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն